Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

312
Z-11

912-01

Հ Ս Խ Հ   Խ Ս Հ Մ   Ա Ս Ֆ Խ Հ
ԿԵՆՏՎԻՃՎԱՐ   ԿԵՆՏՎԻՃՎԱՐ

1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

Ձև № 6

1926 ԹՎԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

ՀՐԱՀԱՆԳ 1926 ԹՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. *Մարդահամարը կատարվում է ԽՍՀՄ-ի բոլոր մասերում միաժամանակ (բացի ՌՍՖԽՀ ամենահյուսիսային հեռավոր վայրերից)* 1926 *թվի Դեկտեմբերին և ցուցակագրում է տեղում գտնված ներկա ազգաբնակչությունը, վորի հաշվառումը համարեցվում է այն որվան, վոր որը վոր համամիութենական Կենտվիճվարը նշանակել է, այն է՝* 1926 *թվի Դեկտեմբերի* 17-*ին:*

2. *Մարդահամարին յենթակա յե Միության ամբողջ ազգաբնակչությունը, ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական: Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի զորամասերում ու հիմնարկներում մարդահամար կատարելու կարգը վորոշվում է հատուկ հրահանգով, վորը Կենտվիճվարը հրատարակում է Ռազմածովային ժողկոմի և միացյալ Պետական Քաղվարչության հետ փոխադարձ համաձայնությամբ:*

9.09.2013

13696

3· Ազգաբնակչությունը ցուցակագրվում և իր գիշերած տեղում, ուր նա կլինի մարդահամարի օրը (թեկուզ ցուցակագրվող անձը իբրև ժամանակավոր ապրող լինի այն վայրում, ուր նրան գտել է մարդահամարը, այլ վոչ թե ծառայության կամ աշխատանքի տեղում)։ Մարդահամարի օրվա առավոտյան զեմ ուղևորության մեջ յեղող ազգաբնակչությունը (յերկաթուղու գնացքներում, ծովային ու գետային նավերում) ճանապարհների Հաղորդակցության Ժողկոմատի համաձայնությամբ ցուցակագրվում և սահմանված հատուկ կարգով։

4· Անդրկովկասում քոչվոր ազգաբնակչությունը ցուցակագրվում է ձմեռվա քոչատեղերում հատուկ կարգով, վորը մշակում է Հայաստանի Կենտվիճվարը և հաստատում Անդրկենտվիճվարը։

5· Մարդահամարը կատարվում է անձնական թերթիկների միջոցով, այսինքն՝ ամեն մի անձի համար կազմվում է առանձին անձնական թերթիկ։ Միութենական կենտվիճվարի կազմից հաստատված ցուցակով քաղաքային վայրերում, բացի անձնական թերթիկներից, կազմվում են նաև ընտանեկան թերթիկներ, ինչպես ընտանիքների, այնպես էլ միայնակների համար, բացի զորանոցային տիպի հանրակացարաններից (հիվանդանոցները, ուղղիչ տները, զորանոցները, մանկատները, հյուրանոցները և այլն)։

6· Բացի դրանից, քաղաքային վայրերում ամեն մի կորմամբի համար կազմվում է առանձին կորմամբերթ, իսկ գյուղական վայրերում յուրաքանչյուր առանձին բնակավայրի համար կազմվում է ծխերի հատուկ ցուցակ։

312
Z-11

25 SEP 2006

1009
38861

2. ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՈՂ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

7· Մարդահամարի աշխատանքների ընդհանուր ղեկավարությունն ու վերահսկողությունը պատկանում է Միության Կենտվիճվարին, վորի դիրեկտիվներն ու կարգադրությունները կիրառում են այն բոլոր հիմնարկություններն ու անձինք, վորոնք կատարում են մարդահամարը։

Անդրկովկասում մարդահամարը կատարելու անմիջական ղեկավարությունն ու վերահսկողությունը պատկանում է Անդրկենտվիճվարին, վորի դիրեկտիվներն ու կարգադրությունները կատարում են Հանրապետական Կենտվիճվարները։

8· Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում մարդահամարի ղեկավարությունը և կատարելը ղեկավարում է այդ հանրապետությունների Կենտվիճվարների վրա, իրենց տերիտորիայի սահմաններում միութենական ծրագրով և Անդրկենտվիճվարի հրահանգների ու դիրեկտիվների համաձայն, վորի առջև այդ հիմնարկությունները պատասխանատու են իրենց հանրապետությունների սահմաններում կատարվող մարդահամարի հաջողության համար։

9· Արխանգելսկի, Աստրախանի և Նախիջևանի հանրապետությունների մեջ, ինչպես նաև Հարավ Ռուսիայի ու Լենինգրադի ավտոնոմ շրջաններում, գավառներում ու մեծ քաղաքներում մարդահամարի անմիջական կատարումը, համաձայն միութենական ծրագրի, հանձնարարվում է այդ հանրապետությունների Կենտվիճվարներին, շրջանային վիճվարչություններին, գա-

վառային վիճբյուրոներին և քաղաքային վիճբաժիններին կամ Հանրապետական Կենտվիճվարի կողմից հատուկ այդ նպատակով նշանակված առանձին անձերի։

10· Առանձին հանրապետությունների տերիտորիաներն իրենց վարչական բաժանումների սահմանում կարող են ըստ տեղական պայմանների ստորաբաժանվել վիճակագրական շրջանների, որոնց գլուխն են կանգնելու առանձին վարիչներ։

Վիճակագրական շրջանների թիվը որոշում են Հանրապետական Կենտվիճվարները և հաստատում է Անդրկենտվիճվարը։ Վիճակագրական շրջանների սահմանները որոշում են հանրապետական Կենտվիճվարները, ըստ որում վիճակագրական շրջանները կազմվում են այնպես, որ գավառամասի (թեմի, դայրայի) տերիտորիան չկտրատվի զանազան վիճակագրական բաժինների։

3. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

11· Մարդահամարը կատարվում է հանրապետական Կենտվիճվարների կողմից հրավիրված հատուկ ցուցակագրողների (արձանագրողի) միջոցով։ Ցուցակագրողների կազմը հրավիրելու և նախապատրաստելու անմիջական պարտականությունն ընկնում է վիճակագրական շրջանների վարիչների վրա։

12· Ցուցակագրողների աշխատանքները միացնելու, նրանց անմիջական կերպով ղեկավարելու, նրանց աշխատանքներին վերահսկելու և ցուցակագրողների նախապատրաստման գործին ոգնելու համար, հրավիրվում են հատուկ հրահանգիչներ, որոնցից յուրաքանչյուրին հանձնվում է որոշ թվով ցուցակագրողներ (բայց ոչ ավելի 12-ից՝ գյուղական վայրերում և 20-ից՝ քաղաքներում)։

13· Մարդահամարը կատարելու համար իբրև ցուցակագրողներ հանձնարարվում է հրավիրել· 1· տարրական և միջնակարգ դպրոցների ուսուցիչներին և առհասարակ ժողովրդական լուսավորության գործում աշխատողներին, 2· կուսակցական և կոմյերիտական բջիջների ակտիվին, 3· բարձրագույն դպրոցների, նմանապես Բանֆակների, Տեխնիկումների և միջնակարգ պրոֆեսիոնալ դպրոցի աշակերտներին, 4· միջնակարգ դպրոցի այն ուսանողներին, որոնք իրենց տարիքով ու զարգացմամբ համապատասխանում են (մանավանդ քաղաքներում), 5· Գյուղխորհուրդների և Գործկոմների քարտուղարներին նաև այն խորհրդային ծառայողներին, որոնք մարդահամարի աշխատանքների համար իրենց կրթական ցենզով պիտանի են, 6· Գավվիճբյուրոների կամավոր թղթակիցներից ամենավորակյալներին, 7· Զանազան կազմակերպությունների վիճակագրական աշխատակիցներին (մանավանդ ֆաբրիկագործարանական վիճակագիրներին)։

14· Հրահանգիչներ են հրավիրվում ավելի բարձր վարակի անձինք, գլխավորապես վիճակագրական անցյալ (ստաժ) ունեցողներից և մանավանդ այնպիսիներից, որոնք մասնակցել են նախորդ մարդահամարներին և կամ վերջին տարիներում պետական վիճակագրական մարմինների միջոցով կատարված զանազան տեղական հետազոտություններին։ Գյուղական վայրերում պետք է ոգտագործել ամենավորակյալ շրջանա-

յին վիճակագիրներին, գավառակային գյուղատնտեսներին ու բժիշկներին, իսկ քաղաքներում նաև զանազան վիճակագրական կազմակերպությունների վորակյալ աշխատակիցներին:

15․ Ցուցակագրողներին ու հրահանգիչներին (մանավանդ առաջիններին) պետք է հավաքել, գլխավորապես, տեղական բնակիչների միջից նրանց, վորոնք լավ ծանոթ են իրենց շրջանին: Մարդահամարի աշխատակիցների շրջագայության ծախքերի համար դրամական միջոցները տրվում են այն աստիճանի աննշան չափերով, վոր աշխատակիցներին մի տեղից մյուսն ուղարկել կարելի յե բացառիկ դեպքերում միայն, յերբ բոլորովին անհնարին է տեղում համապատասխան մարդիկ գտնել վիճակագրություն կատարելու համար:

16․ Հանրապետական Կենտվիճվարները և նրանց տեղական օրգանները մարդահամարի համար աշխատակիցներ գրավելու գործում դիմում են Հանրապետական Լուսժողկոմներին և նրանց տեղական օրգաններին, տեղական արհեստակցական միությունների ու Կոմյերիտմիության ոգնության, նմանապես այդ միևնույն նպատակով կազմակերպվում են մարդահամարի պրոպագանդայի կամպանիա:

17․ Մարդահամարը կատարելու համար տրվում է․ քաղաքային բնակավայրերում՝ 7 օր, և գյուղական բնակավայրերում՝ 14 օր ժամանակ (դրա մեջ չհաշվելով նախապատրաստական աշխատանքներն ու նյութերի հանձնումը): Մարդահամարի սկսելու օրը համարվում է այն օրը, վորին զուգադրվելու յեն ազգաբնակչության հաշվառումն՝ այսինքն 1926 թվի Դեկտեմբերի 17-ը:

18․ Յուրաքանչյուր ցուցակագրողի շրջանը հանձնվում է մի ցուցակագրողի: Ամեն մի հանրապետության ցուցակագրողի ու հրահանգչի շրջանների թիվը ցույց է տալիս Հանրապետական Կենտվիճվարը, վոր հաստատվում է Անդրկենտվիճվարի կողմից:

19․ Ցուցակագրողի և հրահանգչի շրջանները չպետք է իրար մեջ ընդ. մեջ լինեն: Ցուցակագրողի շրջանները չպետք է իրար հետ միացնեն քաղաքի և գյուղական վայրերի մասերը, նմանապես չպետք է բաղկացած լինեն զանազան գավառամասերի (թեմի, գայրա) մասերից:

20․ Կատարվելիք աշխատանքների ու իր շրջանի հետ ծանոթանալու համար ցուցակագրողին տրվում է․ քաղաքներում՝ 2 օր, գյուղական վայրերում՝ 3 օր, իսկ նյութերը հանձնելու համար 2 օր:

21․ Հրահանգիչների ու վիճակագրական շրջանների վարիչների վարձատրման ժամկետները վորոշվում են Հանրապետական Կենտվիճվարների կողմից և հաստատվում է Անդրկենտվիճվարների կողմից:

22․ Մարդահամարի աշխատակիցների վարձատրությունը վորոշվում է, այդ գործի համար նախահաշվով հատկացրած գումարի սահմաններում, Հանրապետական Կենտվիճվարների կողմից և պարտադրաբար հաղորդվում է մարդահամարին մասնակցելու հրավիրված անձանց մինչև նրանց աշխատանքների սկսվելը:

23․ Մարդահամարին մասնակցող բոլոր անձանց տրվում են վկայականներ պատշաճ ստորագրություններով ու կնիքով:

4. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

24. Ներկա մարդահամարի համար նախապատրաստական աշխատանքները կատարում են, նախ և առաջ Հանրապետական Կենտվիճվարները, վորոնց վրա յե դրվում մարդահամարի անմիջական տնօրինությունը, վորը հետևյալն է. ա) ուղղել բնակավայրերի ցուցակները, բ) քաղաքներում՝ կալվածների ցուցակները, գ) պատրաստել սխեմատիկ քարտեզներն ու հատակագծերը, վորոնցով մարդահամարի աշխատակիցները նրանցով առաջնորդվեն, դ) տերիտորիան բաժանել վիճակագրական, հրահանգչի ու ցուցակագրողի շրջանների, յե) մարդահամարը կատարելու համար հրավիրել ղեկավարներ, հրահանգիչներ ու ցուցակագրողներ և նրանց պատրաստել զ) վիճակագրական շրջանների համար վորոնել շենքեր, է) անհրաժեշտության դեպքում ցույց տալ հավաքատեղիներ նաև հրահանգչական շրջանների համար ևս, ը) մարդահամարի նյութերը բաժանել վիճակագրական շրջանների մեջ և մարդահամարին մասնակցողներին հայթայթել գրենական պիտույքներ, թ) ազգաբնակչությանը վաղօրոք տեղեկացնել կատարվելիք մարդահամարի մասին և ժ) համաձայնություն գալ այն հիմնարկությունների հետ, վորտեղ մարդահամարը կատարվում է առանձին կարգով, նրանց մեջ կատարվելիք մարդահամարի մասին:

25. Այս մարդահամարի համար առաջներում կազմված բնակավայրերի ցուցակներն անպատճառ ստուգման են յենթարկվում բոլոր յեղած աղբյուրների

հիման վրա, ըստ վորում ցուցակում նշանակվում է յուրաքանչյուր բնակավայրի ծխերի և բնակիչների թիվն ու գերակշռող ազգաբնակությունը: Նույն ձևով ստուգվում են քաղաքներում կալվածների ցուցակները. այդ ցուցակները ստուգելու համար կարելի յե կատարել քաղաքի ազգաբնակության նախնական հաշվառում, առանց սակայն դրա համար առանձին դրամական հատկացումներ խնդրելու:

26. Ժամանակակից տեղագրական քարտեզներ չունենալու դեպքում, գավառների սխեմատիկ քարտեզները կազմվում են նախկին քարտեզային նյութերի հիման վրա, անպայման նրանց վրա նշանակելով բոլոր բնակավայրերը և գավմասերի (թեմի, գայրա) գավառների ներկա սահմանները, ըստ կարելվույն ավելի խոշոր մասշտաբով:

27. Ցուցակագրողներին ու հրահանգիչներին անպատճառ տրվում են իրենց շրջանի մեջ մտնող բնակավայրերի ցուցակների պատճենները, իսկ քաղաքներում՝ կալվածների ցուցակները: Անհրաժեշտ է նույնպես քաղաքային տիպի բնակավայրերում նրանց տալ տնատերերի ցուցակներ, հիշելով՝ նրանցից ազգայնացրածներն ու քաղաքապատկանները, իսկ խոշոր քաղաքներում՝ նաև բնակարանների ցուցակը:

28. Ցուցակագրողներն ու հրահանգիչները ստանում են նույնպես այն շրջանների սխեմատիկ քարտեզների պատճենները, ուր նրանք աշխատում են, իսկ քաղաքներում՝ իրենց շրջանի հատակագծերը: Յեթե քաղաքներից մեկն ու մեկը հատակագիծ չունի, Հանրապետական Կենտվիճվարները մարդահամարը սկսվելուց առաջ,

վաղորոք շրջագայելով բոլոր կալվածները կազմել են տալիս սխեմատիկ հատակագծեր, նրանց վրա նշանակելով գոնե փողոցներն ու կալվածների համարները: Այդպիսի սխեմատիկ հատակագծերը կազմվում են նույնպես մեծ գյուղերի համար մարդահամարից մեկ յերկու որ առաջ:

29. Վոչ, ուշ, քան ս. թ. նոյեմբերի 15-ը հանրապետության տերիտորիան բաժանվում է վիճակագրական, հրահանգչի ու ցուցակագրողի շրջանների: Այդ մարմինների միջոցով կատարված ցուցակագրողի կամ հրահանգչի շրջանների բաժանումը գավվիճբյուրոները, վիճակագրական շրջանների վարիչները, ևս ավագ հրահանգիչները, փոփոխել չեն կարող:

30. Մարդահամարը կատարելու համար ղեկավարներ հրավիրելը վերջանում է նրա սկսվելուց որից մի ամիս առաջ, հրահանգիչներ՝ յերկու շաբաթ առաջ և ցուցակագրողներ՝ մի շաբաթ առաջ: Հանրապետական կենտվիճվարչները վիճակագրական շրջանի վարիչների հետ միասին կազմակերպում են գործնական պարապմունքներ, կատարելով փորձնական աշխատանքներ: Մարդահամար կատարելու համար ցուցակագրողները մինչև մարդահամարի սկսվելը ծանոթանում են իրենց շրջանների հետ:

31. Մարդահամարի նյութերը բաժանելիս ցուցակագրողները ստանում են անձնական թերթիկներ բնակիչների թվի համեմատ, ընտանեկան թերթիկները՝ անձնական թերթիկների քանակի 1-րդի հաշվով, կալվածաթերթեր՝ կալվածների թվի համաձայն. գյուղական վայրերում անձնական թերթիկներ ցուցակագրողները

ստանում են ժողովրդի թվի չափ՝ անձնական թերթիկներ և ծխերի ցուցակները՝ ցուցակագրողի շրջանի ծըխերի ճիշտ թվի համաձայն բաժանված 50-ի վրա (ծըխերի ցուցակի տողերի քանակը):

Ցուցակագրողներն ու հրահանգիչներն ստանում են վերստուգողական թերթիկներ մեկական օրինակ:

Ցուցակագրողների, հրահանգիչների, վիճակագրական շրջանի վարիչների և հանրապետական կենտվիճվարչներում թողնվելիք թերթիկների պահեստային քանակը վորոշվում է հանրապետական կենտվիճվարչն Անդրկենտվիճվարչի կողմից այդ հանրապետության համար ուղարկված թերթիկների քանակի շրջանում:

32. Վիճակագրական թերթիկների լրացնելը կատարվում է քիմիական մատիտով կամ թանաքով:

33. Մարդահամարի մասին ազգաբնակչությանը տեղեկացվում է պրոպագանդի կամպանիայի միջոցով (դասախոսություններով, միտինգներով, թերթերում հոդվածներ տպելով և այլն), վոր կազմակերպում է Հանրապետական կենտվիճվարչները տեղական կուսակցական և արհեստակցական կազմակերպությունների աջակցությամբ: Բացի դրանից վաղորոք ամենուրեք փակցվում են պլակատներ մարդահամարի մասին և բոլոր Գյուղխորհուրդներին ուղարկվում են ծանուցագրեր և վիճակագրության վերաբերյալ պարտադիր վորոշումները, նրա կատարման ձևերի ու ժամանակի մասին:

5. ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ԿԱՏԱՐԵԼԸ

34. Մարդահամարը սկսվում է այն որը, առ վորը

կազմվում է ազգաբնակչության հաշվառումը, այսինքն 1926 թ. դեկտեմբերի 17-ին:

35. Ցուցակագրողները վիճակագրական թերթիկները լրացնում են ազգաբնակչության անմիջականորեն հարցեր տալու միջոցով, առանց հանձնելու այդ աշխատանքը ուրիշ մեկին (տնային վարչության, գյուղական իշխանություններին):

36. Վորպես կանոն ցուցակագրողների կողմից ազգաբնակչության հարցափորձը կատարվելու յե պատասխանողի մայրենի լեզվով, այսինքն այն լեզվով, վորին պատասխանողն ամենից ավելի է տիրապետում կամ վորով առհասարակ խոսում է:

37. Ազգաբնակչության հարց ու փորձ անելը կատարվում է իր բնակավայրում, ցուցակագրողների միջոցով, վորոնք դրա համար շրջագայում են իրենց շրջանի բոլոր տներն ու բնակարանները:

38. Ցուցակագրողները մարդահամարի բոլոր տվյալները և ներկա յեղող ազգաբնակչության մարդահաշիվն անպայման հարմարեցնում են վիճակագրության օրին, այսինքն 1926 թ. դեկտեմբերի 17-ին:

39. Վիճակագրությունը կատարելիս ցուցակագրողները շրջում են իրենց շրջանի սահմաններում գտնված բոլոր կալվածները, բնակելի շինությունները և բնակարանները: Նոր յերևան հանված տները, կալվածները և բնակարանները հենց այդտեղ էլ համապատասխան կարգով ցուցակագրվում են ու մուծվում վերստուգողական ցուցակների և կալվածաթերթիկների մեջ:

40. Ազգաբնակչության թիվը հաշվելիս՝ ցուցակագրողները հատուկ ուշադրություն են դարձնում ժա–

մանակավորապես բնակվող ազգաբնակչության վրա, վորպեսզի նրանց մոռացություն չտան և յերեխաների վրա (մանավանդ ծծկերների), վորոնց ազգաբնակչությունը յերբեմն չի ցույց տալիս: Քաղաքներում բնակիչներին հարց ու փորձ անելու միջոցով ստացած տեղեկությունները ստուգման են յենթարկվում տնային գրքերի մեջ մուծված տվյալների հիման վրա (ուր այդպիսիները կան):

41. Ազգաբնակչությունը կրկնակի հաշվառման յենթարկելուց խուսափելու համար, պետք է հիշել, վոր ազգաբնակչությունը ցուցակագրվում է այն բնակավայրերում, վորտեղ վոր նա կլինի մարդահամարի օրը: Ընդ վորում նրանք, վորոնք գիշերել են վոչ այն բնակարանում, ուր նրանք միշտ ապրում են, ցուցակագրվում են իրենց բնակարանների վրա, այլ վոչ թե գիշերելու տեղում մինչևույն բնակավայրի սահմաններում (հյուր գնացողները, հերթապահություն անողները և այլն): Մանրամասնությունները տես անձնական թերթիկը լցնելու հրահանգում:

42. Մարդահամարի թերթիկները լցնելիս՝ տեղեկությունները պետք է ստանալ նախ և առաջ ընտանիքի գլխավորներից կամ այն անձնավորություններից, վորոնց թերթիկները լրացվում են: Հարց ու փորձն արագացնելու համար հանձնարարվում է նախապես պայմանավորվել տնային վարչության կամ Գյուղխորհուրդների հետ, հարց ու փորձն անելու օրվա ու ժամերի մասին, վորպեսզի նշանակված ժամանակին ընտանիքի գլխավորները կամ փոխարինողներն ըստ կարելվույն լինեն իրենց տեղում: Միայն այն դեպքերում,

յերբ բոլորովին անհնարին է տեղեկություններ ստանալ հարցման յենթարկվողներից, թույլատրվում է թերթիկները լցնել բնակարանի մյուս բնակիչների, կամ հարևանների ասածների հիման վրա։ Եթե նշանակված էն անկարելի յե հարց ու փորձի յենթարկվողներին տանը գտնել, ցուցակագրողն անպատճառ յերկրորդ անգամ է այցելում բնակարանը, հարց ու փորձի ժամանակի մասին նախապես պայմանավորվելով։

43 Բնակարաններն այցելելիս և բնակիչներին հարց ու փորձ անելիս ցուցակագրողները պարտավոր են առաջին իսկ պահանջման ներկայացնել իրենց վկայականները՝ սահմանված ձևով, պատշաճ ստորագրությամբ ու կնիքով հաստատված, իսկ իրենք իրավունք չունեն ապդարնակչությունից պահանջելու վորևե փաստաթուղթ, բացի քաղաքային վայրերում անային վարչությունից տնային գրքույկներից, յեթե այդպիսին կա։

44. Այն դեպքերում, յերբ կատեգորիկ կերպով հրաժարվում են տեղեկություններ հաղորդելու, կամ թույլ տալ բնակարանը մտնելու, ցուցակագրողները՝ դիմում են, քաղաքներում տնային վարչություններին, իսկ գյուղերում՝ Գյուղխորհուրդներին, յեթե այդ դեպքում էլ ցուցակագրողները չստանան մարդահամարի համար պահանջված տեղեկությունները, նրանք այդ մասին պարտավոր են տեղեկացնել իրենց հրահանգիչներին։

45. Ամեն մի ցուցակագրող պետք է հիշի, վոր մարդահամարի հաջողությունը կախված է իրենց քաղաքավարի և կորեկտ վերաբերմունքից հանդեպ ապդարնակչության. նա չպետք է այնպիսի հարցեր տա, վորոնք անմիջականորեն չեն կապված մարդահամարի հետ

6. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՆ ՈՒ ՀԱՆՁՆԵԼԸ

46. Ամեն մի ցուցակագրող, վիճակագրությունը վերջացնելուց հետո, խնամքով ստուգում է հավաքված նյութերը և անհրաժեշտության դեպքում լրացնում է նրանց կամ տեղն ու տեղը յերկրորդ անգամ հարցնելով ուղղում։ Ապա նա ճշտում է անձնական թերթիկները, ընտանեկան թերթիկների, կարված թերթիկների հետ քաղաքային վայրերում և ծխերի ցուցակների հետ գյուղական վայրերում, հաշվում է նրանց ու ստացված թվերը գրում է վերատուգողական թերթիկներում, վորից հետո դուրս է բերում իրա, ցուցակագրողի շրջանի ապդարնակչության թիվը։

47. Հրահանգիչները նյութերը ցուցակագրողներից ընդունելիս՝ անպայման ճշտում են անձնական թերթիկների, ընտանեկան թերթիկների թիվը, կարված թերթիկների թիվը քաղաքային վայրերում և անձնական թերթիկների ու ծխերի ցուցակների թիվը գյուղական վայրերում, հատուկ ուշադրություն դարձնելով, վորպեսզի մարդահամարի զանազան թերթիկներում գրվածները ճշտորեն համապատասխանեն իրար։ Հրահանգիչը նյութերն վերանայում է նույնպես մարդահամարի հարցերին տրված պատասխանների լրիվության ու ճշտության տեսակետից։ Թերություններ ու անճշտություններ նկատելու դեպքում, նյութերը վերադարձվում են ցուցակագրողին տեղումն ուղղելու համար։ Մարդահամարի նյութերը վերջնականապես ընդունելուց հետո հրահանգիչը կազմում է իր շրջանի ապ-

գաբնակչության նախնական թիվը, լրացնելով վերաստուգողական թերթի համապատասխան սյունակները, քան վորում յուրաքանչյուր ցուցակագրողի շրջանի տվյալները գրում և առանձին տողի վրա, և ապա այդ բոլոր նյութերը հանձնում է վիճակագրական շրջանի վարիչին։

48. Վիճակագրական շրջանների վարիչները ընդունելով հրահանգչից մարդահամարի նյութերը և ստուգելով այն, ցուցակագրողի վերաստուգողական թերթի ձևով կազմում և մարդահամարի շրջանի մարդահամարի տվյալների նախնական հաշիվը և նրա մեջ առանձին տողով մացնում յուրաքանչյուր հրահանգչի շրջանի տվյալները։ Վիճակագրական շրջանները մարդահամարի բոլոր նյութերը նախնական հաշվառումի հետ միասին ներկայացնում են Հանրապետական Կենտվիճվարներին ավարտման համար նշանակված որից վոչ ուշ քան մինչև 10 որ։

Ծանոթություն.—Այն ավտոնոմ հանրապետությունները, շրջանները, մեծ քաղաքները և գավառները, վորոնք բաժանվում են մի քանի վիճակագրական շրջանների նրանց մարդահամարի բոլոր նյութերը վիճակագրական շրջանների կողմից ներկայացվում են ավտոնոմ հանրապետությունների և շրջանների վիճակագրական վարչություններին, քաղվիճբաժիններին, գավվիճբյուրոներին, իսկ վերջիններս հանրապետական կենտվիճվարներին պահելով վերահիշյալ ժամկետը։

49. Հանրապետական Կենտվիճվարը ստանալով մարդահամարի նյութերը կազմում է իր տերիտորիայի աղգաբնակչության նախնական հաշիվը և տալիս է գումարներ ավտոնոմ հանրապետություններին և շրջաններին, գավառներին և մեծ քաղաքներին և ուղարկում է այդ նախնական հաշվառումը Միութենական Կենտվիճվարին, իսկ պատճենն Անդրկենտվիճվարին, վոչ ուշ քան մինչև մի ամիս մարդահամարի որվանից (տվարտումից 16 որ հետո), միայն թե հանրապետության վերաբերյալ գումարային թվերը հեռագրով հաղորդվում են Միութեան և Անդրկովկասյան Կենտվիճվարներին։

50 Մարդահամարին մասնակցողների վերջնական հաշվեհարդարը կատարվում և այն ժամանակ, երբ նրանք վերջնականապես հանձնում են մարդահամարի բոլոր նյութերը։ Աշխատանքի վճարման ձևը (ամբողջ աշխատանքի համար միանվագ, որավարձ կամ հատավարձով), տեղական պայմանների համաձայն, նշանակում են Հանրապետական Կենտվիճվարները Անդրկենտվիճվարին հատկացրված գումարի սահմաններում։

7. ՓԱԿ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

51. Վոչ ուշ, քան նոյեմբերի 15-ը Հանրապետական Կենտվիճվարները կազմում են այն հիմնարկությունների մանրամասն ցուցակները, վորոնց մեջ մարդահամարը կատարվում է նրանց վարչության կարգադրությամբ (տես վերը 2 և 5-րդ կետերը), ցույց տալով նրանց բնակարանների ու բնակիչների թիվը։ Ցուցակների մեջ

մացնվում են զորանոցային տիպի հանրակացարաններ ունեցող այն հիմնարկությունները, վորոնք գրավում են ամբողջ կալվածները կամ նրանց առանձնացրած խոշոր մասերը:

Հիմնարկությունների կարիքների համար գրավված փոքրիկ բնակարաններում և գրասենյակային կացարաններում մարդահամարն իրրև կանոն, կատարվում է ընդհանուր կարգով, ցուցակագրողների միջոցով:

52· Մարդահամարը սկսվելուց վոչ ուշ, քան յերկու շաբաթ առաջ հանրապետական կենսավիճակարները համապատասխան (ведомость) գերատեսչությունների հետ համաձայնության են գալիս վերջիններիս յենթակա փակ հիմնարկություններում մարդահամար կատարելու կարգի ու պայմանների մասին և ճշտում են նրանց մեջ ապրողների թվի վերաբերյալ տվյալները:

53· Փակ հիմնարկություններում մարդահամարը կատարվում է նրանց վարչության կարգադրությամբ, վորը մարդահամարի թերթիկները լրացնելու համար իր ծառայողների միջից նշանակում է հատուկ անձնավորություններ: Փակ հիմնարկությունները ցուցակագրողներին հրահանգներ տալը, նրանց մեջ կատարվող մարդահամարին հետևելն ու վերստուգելը, մարդահամարի թերթիկները հիմնարկություններին բաժանելը և լրացված թերթիկների ընդունելը, ինչպես և այդ հիմնարկությունների մարդահամարի տվյալների նախնական հաշվառումը, այն հրահանգիչների կամ վիճակագրական շրջանների վարիչների պարտականությունն է, վորոնց շրջանի սահմաններում գտնվում են այդ հիմ-

նարկությունները: Բացառիկ դեպքում, հատկապես խոշոր հիմնարկությունների համար, հանրապետական կենսավիճակարները կարող են նշանակել հատուկ հրահանգիչներ:

54· Հիմնարկություններում մարդահամար կատարելու ժամանակամիջոցները նշանակվում են գերատեսչությունների հետ համաձայնության գալով, բայց հանրային դեպս քաղաքներում մարդահամար կատարելու համար սահմանված ընդհանուր ժամանակամիջոցներից (7 որ) ավելի չեն կարող լինել:

55· Հյուրանոցներում, գիշերային ապաստարաններում և յերկաթուղային կայարանների ընդհանուր կացարաններում, վորոնք հատկացրված են ուղևորների մնալու համար, մարդահամարը կատարվում է ընդհանուր կարգով մարդահամարի ցուցակագրողների միջոցով ներքևում հիշված հիմունքներով:

56· Հյուրանոցներում մարդահամարն անպայման սկսվում է ու վերջանում մարդահամարի որը, ըստ վորում ցուցակագրվում են մինչև առավոտյան ժամի 9-ը յեկածները: Հյուրանոցների ծառայողներն իրենց ընտանիքներով հանդերձ ցուցակագրվում են ընդհանուր կարգով:

57· Գիշերային ապաստարաններում մարդահամարը կատարվում է վիճակագրության որվա նախընթաց գիշերը ցուցակագրողների միջոցով: Ցուրաքանչյուր գիշերային ապաստարանի համար նշանակվում է հատուկ հրահանգիչ, իսկ ցուցակագրողներ՝ այնքան, վոր յուրաքանչյուրին ընկնի 40 ապաստանողից վոչ ավելի: Զգեստք և մոռացության տալ մասնավորների ունեցած

գիշերային բնակարանները և իջևանատեղերը, վորոնց մեջ ևս մարդահամարը կատարվում է մարդահամարի ճգնաժամային օրվա նախընթաց գիշերը։

Գիշերային ապաստարաններում գիշերօդների ազգանունները չեն գրվում։

58. Ցերկաթուղային կայարաններում գնացք նստելու սպասող ուղևորների համար հատկացված կացարաններում մարդահամարը կատարվում է ցուցակագրողների միջոցով մարդահամարի օրվա առավոտյան ժամի 9-ից մինչև 12-ը, ըստ վորում ցուցակագրվում են այդտեղ ներկա յեղող այն բոլոր անձինք, վորոնք սպասում են գնացք նստելու։ Խոշոր հանդուցավոր կետերում մարդահամարի աշխատանքները ղեկավարելու համար նշանակվում են առանձին հրահանգիչներ։ Միևնույն կարգը, կարիք յեղած դեպքում կիրառվում է նույնպես ծովային նավահանգիստների վերաբերմամբ, վորտեղ նավ նստելու համար սպասողներ կլինեն։

31e
Հ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԵՆՏՎԻՃԱՎԱՐԻ

ՀԱՅՊՈԼԻՏԻՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպ 2267 գ Գտավեր 1468 Տիրաժ 200

ՀՀ Ազգային գրադարան
NL0194845